# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

## Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » նոյեմբերի 2018 թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ԱՐԱ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սաղաթելյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի՝ Ձեզ ենք ներկայացնում՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի նախագծի (Պ-403-24.10.2018-ՊԻՄԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է ներկայացված օրենքի նախագծով լրացվող գործող սահմանադրական օրենքի հոդվածները թողնել անփոփոխ՝ նկատի ունենալով հետևյալ հանգամանքները՝

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 133-135-րդ հոդվածներով ամրագրված դրույթներով կարգավորվում են Վճռաբեկ դատարանի նախագահի և դատավորների լիազորությունների ժամկետի ավարտմամբ կամ այլ հիմքով այդ պաշտոնները թափուր մնալու դեպքում Ազգային ժողով դատավորի (նախագահի) թեկնածու ներկայացնելու կարգն ու ժամկետները, իսկ Վճռաբեկ դատարանի նախագահի, Վճռաբեկ դատարանի դատավորի թեկնածուների Ազգային ժողովի կողմից չընտրվելու, ինչպես նաև թեկնածուների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության նախագահի ներկայացրած առարկությունն Ազգային ժողովի կողմից չընդունվելու դեպքերում Բարձրագույն դատական խորհրդի կողմից նոր թեկնածու ներկայացվելու կարգին և ժամկետներին վերաբերող դրույթներ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում նախատեսված չեն:

Հարկ է նշել, որ Սահմանադրական դատարանը 2014 թվականի ապրիլի 8-ի ՍԴՈ-1143 որոշմամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը՝ «Օրենսդրական բացն առկա է այն պարագայում, երբ իրավակարգավորման լիարժեքություն ապահովող տարրի բացակայության կամ այդ տարրի թերի կանոնակարգման հետևանքով խաթարվում է օրենսդրորեն կարգավորված իրավահարաբերությունների ամբողջական և բնականոն իրագործումը»:

Ամփոփելով վերոգրյալը՝ նախագծով առաջարկվող կարգավորումների ընդունման պարագայում կստեղծվի օրենսդրական բաց, քանի որ ներկայացված նախագծով թեկնածուների ներկայացման ժամկետին վերաբերող հարցի կարգավորումը «Հայաս-

տանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքին է վերապահվել այն դեպքում, երբ նշված օրենքում նման դրույթները բացակայում են՝ առկա դրույթները վերաբերում են բացառապես Վճռաբեկ դատարանի նախագահի և դատավորների լիազորությունների ժամկետի ավարտմամբ կամ այլ հիմքով այդ պաշտոնները թափուր մնալու դեպքում Ազգային ժողով դատավորի (նախագահի) թեկնածու ներկայացնելուն: Ավելին, նշված օրենքով բացակայում է նաև այդ հիմքով թեկնածուների ներկայացման կարգը:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 նոյեմբերի 2018 թվականի N 1563 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ Արթուր Հովհաննիսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի նախագիծը (Պ-403-24.10.2018-ՊԻՄԻ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2018 թ. նոյեմբերի 23
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

*Պ-403-24.10.2018-ՊԻՄԻ-011/0*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված 1.*** «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ՀՕ-9-Ն սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 142-րդ հոդվածի 7-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«7. Եթե Վճռաբեկ դատարանի նախագահը չի ընտրվում, ապա քվեարկությունից հետո՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված ժամկետում, թափուր մնացած պաշտոնի համար Բարձրագույն դատական խորհուրդը ներկայացնում է Վճռաբեկ դատարանի նախագահի նոր թեկնածու:»:

***Հոդված 2.*** Օրենքի 143-րդ հոդվածի.

1. 7-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ

«7. Եթե Վճռաբեկ դատարանի դատավորի թեկնածուն չի ընտրվում, ապա քվեարկությունից հետո՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված ժամկետում, Բարձրագույն դատական խորհուրդն առաջադրում է նոր թեկնածուներ:»:

2. 11-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«11. Եթե Ազգային ժողովն ընդունում է Հանրապետության նախագահի առարկությունը, ապա քվեարկությունից հետո՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված ժամկետում, Բարձրագույն դատական խորհուրդն առաջադրում է նոր թեկնածուներ:»:

***Հոդված 3.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

**«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ**

**1. Առկա խնդիրները.**

Վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների մրցույթի անցկացման եւ թեկնածուների ներկայացման, ինչպես նաեւ Վճռաբեկ դատարանի նախագահի թեկնածու առաջարկելու հարցերը կանոնակարգված են «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 132-րդ, 133-րդ եւ 135-րդ հոդվածներով, իսկ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 142-րդ եւ 143-րդ հոդվածներով նախատեսված է Վճռաբեկ դատարանի նախագահի եւ Վճռաբեկ դատարանի դատավորների թեկնածուների ընտրության կարգը: Տվյալ դեպքերում հիշյալ սահմանադրական օրենքներում առկա է ներքին հակասություն: Մասնավորապես, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված է մրցույթի անցկացման, ամփոփման, Բարձրագույն դատական խորհրդում քննարկման եւ Ազգային ժողով ներկայացման ընդհանուր առմամբ 37 օր ժամանակ, իսկ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով լրացուցիչ թեկնածություններ առաջարկելու համար 10 օր ժամանակ: Առաջարկվող փոփոխություններով հաղթահարվում են նշված ժամկետային անհամապատասխանությունները:

**2. Առաջարկվող կարգավորումները.**

Նախագծով սահմանված փոփոխությունների նպատակն է վերացնել Վճռաբեկ դատարանի նախագահի եւ Վճռաբեկ դատարանի դատավորի թեկնածուներ առաջարկելու ընթացակարգը կանոնակարգող «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի եւ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի համապատասխան դրույթների անհամապատասխանությունը:

Հաշվի առնելով, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված է, որ նորմատիվ իրավական ակտում փոփոխություն կամ լրացում կարող է կատարվել միայն նույն տեսակի եւ բնույթի նորմատիվ իրավական ակտով, մշակվել է «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի նախագիծը:

**3. Ակնկալվող արդյունքները.**

Իրավական ակտի նախագծի ընդունմամբ, վերացնելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» եւ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքների համապատասխան կարգավորումների ներքին հակասությունը, կհստակեցվի Վճռաբեկ դատարանի նախագահի եւ Վճռաբեկ դատարանի դատավորի թեկնածուների՝ Ազգային ժողով ներկայացնելու ժամկետը: